Գյուղատնտես

ՆՈՅԵՄԲԵՐ 5 - 17 2014 Թ. ԹԻՎ 29 (2051)

ՏԱՄՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԿՏՐԱՄԱԴՐՎԻ ՍԵՐՄԱՑՈՒ

ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 941 որոշման համաձայն, Գեղարքունիքի մարզի համայնքներին հատկացվել է գարնանացան գարու, առվույտի և կորնգանի սերմացու: Այն նախատեսված է անհատույց տրամադրել մարզի բոլոր համայնքներին՝ ըստ բնակչության թվաքանակի: Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության տվյալներով, մարզ է ներկրվել 225 տոննա 250 կգ գարնանացան գարու, 30 տոննա 794 կգ առվույտի և 34 տոննա 082 կգ կորնգանի սերմացու:

Գեղարքունիքի մարզում արդեն մի քանի օր է, ինչ գարու, առվույտի և կորնգանի սերմացուն բաշխվում է համայնքներին, որն իրականացվում է համայնքների բնակիչների թվաքանակի վերաբերյալ նախապես ներկայացված հայտերի հիման վրա՝ Գեղարքունիքի մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի անդամների վերահսկողությամբ: Համայնքներում սերմացուների բաշխումը տեղի կունենա այդ նպատակով հրավիրվելիք ավագանիների նիստերի ընթացքում կայացրած որոշումների արդյունքում:

ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄՈՒՏՔԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՇՈՒԿԱ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է «Քարֆուր» (Carrefour) առևտրային ցանցի հայաստանյան գրասենյակի գլխավոր տնօրեն Քրիստիան Դը Նալին և մարկետինգի գծով տնօրեն Լոռեն Նազեին՝ Հայաստանում «Քարֆուր»-ի բացմանը վերաբերող հարցերը քննարկելու նպատակով:

Ողջունելով հյուրերին՝ նախարարն ընդգծել է «Քարֆուր» ցանցային խանութի բացման կարևորությունը՝ թե՛ տեղական արտադրողների, և թե՛ սպառողների համար: «Հայաստանի գյուղատնտեսական մթերքներ արտադրողներն անհամբեր սպասում են Հայաստանում «Քարֆուր»-ի գործունեության սկզբին, քանի որ դրանով իրենց արտադրանքն իրացնելու համար կստեղծվի նոր հնարավորություն: Համոզված եմ, որ բացումից հետո, «Քարֆուր»-ի հայաստանյան առևտրային ցանցը ոչնչով չի զիջի «Քարֆուր»-ի գործունեության եվրոպական մակարդակին»,- նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Նախարարը նաև համոզմունք է հայտնել, որ «Քարֆուր»-ի մուտքը հայկական շուկա՝ կնպաստի տեղական արտադրանքի որակի բարձրացմանն ու տեսականու ընդլայնմանը:

Իր հերթին, ցանցի հայաստանյան գրասենյակի տնօրեն Քրիստիան Դը Նալը տեղեկացրել է, որ ցանցի բացումը Հայաստանում նախատեսվում է 2015 թվականի հունվարի վերջին: Նրա խոսքով՝ «Քարֆուր» առևտրային ցանցում նախապատվությունը տրվելու է տեղական արտադրանքին, իսկ գյուղմթերքի 95 տոկոսը ձեռք է բերվելու անմիջապես հայ արտադրողներից: Այս կապակցությամբ նախարար Սերգո Կարապետյանը հույս է հայտնել, որ տեղական արտադրողների նկատմամբ կներկայացվեն ավելի մեղմ պահանջներ, իսկ ցանցի խանութների գնագոյացումը կիրականացվի՝ ելնելով հայկական շուկայի առանձնահատկություններից:

Քրիստիան Դը Նալը նաև պատրաստակամություն է հայտնել Հայաստան գործուղել համապատասխան մասնագետների՝ խորհրդատվություններ մատուցելու վերամշակող ճյուղի տարբեր ոլորտների ընկերություններին՝ արտադրանքի որակի և տեսականու հարցում: Հանդիպման ավարտին՝ նախարար Սերգո Կարապետյանն առաջարկել է առաջիկայում ստորագրել փոխըմբռնման հուշագիր: Նախարարը նաև խոստացել է՝ նախքան ցանցի բացումը, կազմակերպել «Քարֆուր»-ի ներկայացուցիչների հանդիպումը վերամշակող ընկերությունների հետ:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանն ընդունել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանին և նրա առաջին տեղակալ Գրիշա Բաղիյանին: Հանդիպմանը, որին մասնակցում էր ԼՂՀ գյուղատնտեսության նախարար Անդրանիկ Խաչատրյանը, քննարկվել են գյուղատնտեսության ոլորտում հայկական երկու պետությունների փոխգործակցությանը վերաբերող մի շարք հարցեր: Երկրի ղեկավարը, ԼՂՀ գյուղատնտեսությանը ցուցաբերած գործնական աջակցության համար, Սերգո Կարապետյանին պարգևատրել է «Երախտագիտություն» մեդալով՝ գոհունակությամբ նշելով Հայաստանի և Արցախի գյուղատնտեսության նախարարարությունների միջև համագործակցության բարձր մակարդակը և այդ գործում նախարարի անձնական ներդրումը:

Իսկ Արցախի Հանրապետության վարչապետ Արայիկ Հարությունյանը ողջունել է նրանց այցը՝ կարևորելով պարբերական շփումների ու խորհրդակցությունների կազմակերպումը: Վարչապետը գոհունակություն է հայտնել համագործակցության առկա մակարդակից՝ բարձր գնահատելով նախարար Ս. Կարապետյանի ներդրումն Արցախի գյուղատնտեսության զարգացման գործում: Կողմերը քննարկել են հետագա համագործակցության հնարավորություններն՝ անասնապահության, գյուղտեխնիկայի սպասարկման և մի շարք այլ ոլորտներում: Նրանք մտքեր են փոխանակել երկու հանրապետությունների սննդի անվտանգության բնագավառում առկա հիմնախնդիրների շուրջ:

Պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ հատկապես մսամթերքի անվտանգության մակարդակի բարձրացման ուղղությամբ իրագործվող համատեղ քայլերի վերաբերյալ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Ֆրանսիայի Ռոն Ալպեր-Հայաստան հանձնախմբի նախագահ Էդուարդ Սիմոնյանի գլխավորած պատվիրակությանը: Պատվիրակության կազմում էին հանձնախմբի արտաքին հարաբերությունների հանձնակատար Աննա Ֆիորինի Բերիոտը, Սյուզ Լա Ռուսի գինու համալսարանի տնօրեն Ռենե Պայանը, Գյուղատնտեսության պալատի նախագահ Ժան Լյուկ Ֆրոժերը և կազմակերպության հայաստանյան ներկայացուցիչ Անահիտ Դավթյանը:

«Այս հանդիպումը՝ 2014 թվականի ապրիլին Ֆրանսիայում իմ և Ռոն Ալպեր նահանգի ներկայացուցիչների հետ կայացած հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքն է, ուստիև եկել է գործնական քայլերի անցնելու ժամանակը»,- ողջունելով հյուրերին՝ նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Նախարարի խոսքով՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը Ռոն Ալպեր նահանգի հետ ունի համագործակցության մեծ ներուժ, մասնավորապես՝ գինեգործության ոլորտում: Պատվիրակության ղեկավար Էդուարդ Սիմոնյանը տեղեկացրել է, որ հանձնախումբն արդեն երեք տարի է, ինչ Հայաստանում ծավալել է հեռավոր համայնքների զարգացմանն ուղղված գործունեություն և հավաստիացել, որ համագործակցության լավագույն ուղղություններից մեկը կարող է հանդիսանալ գինեգործությունը, քանի որ այս ոլորտում Հայաստանն ունի ոչ միայն հին ավանդույթներ, այլևս չիրացված մեծ ներուժ: Այս կապակցությամբ նախարար Սերգո Կարապետյանը հայտնել է հյուրերին, որ վերջին տարիներին գինեգործության զարգացումը Հայաստանում լայն թափ է ստացել, հիմնվել են խաղողի նոր այգետարածքներ, կառուցվել են ժամանակակից գինու գործարաններ, որոնցում ներգրավված են նաև ֆրանսիացի մասնագետներ:

ԱՍՈՒԼԻՍ

ՄԹԵՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Օրերս տեղի ունեցավ ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանի մամուլի ասուլիսը, որի ընթացքում ներկայացվեցին պտուղ-բանջարեղենի մթերման արդյունքներն ու ամփոփվեցին արտահանման ցուցանիշները:

Համաձայն ներկայացված ցուցանիշների՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ի դրությամբ, պտուղ-բանջարեղեն վերամշակող 40 և խաղող վերամշակող շուրջ 50 ընկերությունների կողմից մթերվել է շուրջ 230.6 հազար տոննա պտուղ-բանջարեղեն (5.9 մլրդ. դրամի) և խաղող (28.0 մլրդ. դրամի), այդ թվում՝ 33.5 հազար տոննա բանջարեղեն, որից՝ 23.1 հազար տոննա լոլիկ, 13.1 հազար տոննա պտուղ և 184.0 հազար տոննա խաղող:

«Ընթացիկ տարվա պտուղ-բանջարեղենի և խաղողի մթերման ընդհանուր ծավալը, նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 6.7 հազար տոննայով կամ 3 տոկոսով: Խաղողի մթերման 1 կգ-ի միջին գինը կազմել է 152.1 դրամ, նախորդ տարվա՝ 146.2 դրամի համեմատությամբ: Նախորդ տարվա համեմատությամբ աճել են նաև պտուղ-բանջարեղենի մթերման գները, մասնավորապես՝ լոլիկի մթերման միջին գինը գերազանցել է 40 դրամը՝ նախորդ տարվա 36.9 դրամի դիմաց»,- իր խոսքում նշեց Ռոբերտ Մակարյանը:

Նախարարի տեղակալը նաև հայտնեց, որ մինչև մթերումների սկսվելը, պտուղ-բանջարեղեն և խաղող վերամշակող ընկերությունները գյուղացիական տնտեսությունների հետ կնքել էին 11965 պայմանագիր, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է ավելի քան 20 տոկոսով: Պայմանագրերի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 112.5 մլն դրամի կանխավճար և 675.1 մլն դրամի բուժանյութեր, պարարտանյութ և այլ օժանդակություն: «Այս տարի արձանագրվել է նաև մթերվող պտուղ-բանջարեղենի և խաղողի դիմաց գյուղացիական տնտեսություններին կատարվող վճարումների գործընթացի բարելավում: Վճարումների մեծ մասը կատարվել է անմիջապես գնման պահին կամ 7-10 բանկային օրերի ընթացքում: Նոյեմբերի 6-ի դրությամբ, պտուղ-բանջարեղենի մթերումների դիմաց կատարված վճարումները կազմել են 95.9 տոկոս կամ 5946.7 մլն դրամից վճարվել է 5702.1 մլն դրամը, իսկ խաղողի մթերումների դիմաց՝ 91.6 տոկոս կամ 27993.0 մլն դրամից վճարվել է 25638.0 մլն դրամը: Վճարման ենթակա մնացած 2599.6 մլն դրամը, ըստ ընկերությունների հավաստիացման, ամբողջությամբ կվճարվեն մինչև տարեվերջ»,- հավելեց Մակարյանը: ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանն ամփոփեց նաև տարվա ընթացքում 2014 թվականի պտուղբանջարեղենի արտահանման տվյալները: Ըստ այդմ՝ նոյեմբերի 6-ի դրությամբ, հանրապետությունից արտահանվել է 40244.9 տոննա պտուղ-բանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, այդ թվում՝ 12716.9 տոննա պտուղ, որից՝ 5605.1 տոննա խաղող, 2963.8 տոննա դեղձ, 6945.6 տոննա բանջարեղեն և 20582.3 տոննա կարտոֆիլ:

2013 թվականի նույն ժամանակահատվածում արտահանվել էր 47327.4 տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, այդ թվում՝ 31067.5 տոննա պտուղ, որից՝ 4500.5 տոննա խաղող, 974.1 տոննա դեղձ, 16259.9 տոննա բանջարեղեն և 10369.5 տոննա կարտոֆիլ, իսկ 2013 թվականին տարեկան արտահանման ծավալները կազմել են 64505.1 տոննա պտուղ-բանջարեղեն և կարտոֆիլ, որից՝ 23258.9 տոննա ծիրան, 7562.8 տոննա խաղող, 6379.6 տոննա բանջարեղեն և 23978.2 տոննա կարտոֆիլ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալի հավաստմամբ, 2014 թվականի արտահանման ծավալների նվազումը՝ 2013 թվականի համեմատությամբ, պայմանավորված է ծիրանի բերքի սակավությամբ, քանի որ նախորդ տարի արտահանված թարմ պտուղ-բանջարեղենի ընդհանուր ծավալի ավելի քան 36 տոկոսը կազմել է ծիրանը:

ԱՆԴԱՌՆԱԼԻ ԿՈՐՈՒՍՏ

ՀՀ գյուղատնտեսության ոլորտը ծանր կորուստ կրեց: Կյանքի 81-րդ տարում վախճանվեց ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հիմնախնդիրների հանձնաժողովի նախագահ, ՀՀ գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի, Բնության և հասարակության միջազգային ակադեմիայի, Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի պրոֆեսոր Վլադիմիր Մովսիսյանը:

«Անհատներ կան, որոնք ազգային անգնահատելի հարստության արժեք ունեն»,- մի առիթով ասել է հայ գրականության վարպետներից Ավետիք Իսահակյանը: Վլադիմիր Մովսիսյանը, ով իր երկրաշեն գործունեությամբ ամբողջ կյանքում առաջնորդվել է ժողովրդի և հայրենիքի ճակատագրի հանդեպ ունեցած մտահոգությամբ, իր իմացությամբ, փորձով, վաստակով և հայրենիքին նվիրվածության վառ օրինակով, հիրավի, այդ բացառիկ անհատներից մեկն էր:

1975-1990 թթ. վարել է պետական և կուսակցական մի շարք բարձր պաշտոններ՝ ՀԿԿ Կենտկոմի գյուղբաժնի վարիչ, ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ, իսկ 1986 թվականից՝ միաժամանակ ՀՀ պետագրոարդի նախագահ, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար: ԽՄԿԿ 28-րդ համագումարում ընտրվել է ԽՄԿԿ Քաղբյուրոյի անդամ: 1996թ. նշանակվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, 1996-1999 թթ. զբաղեցրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնը: 1999-2004 թթ. աշխատել է ՀՀ վարչապետի խորհդական: 2009թ. Հանրային խորհրդի անդամ էր:

Վլադիմիր Մովսիսյանը ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենն էր: Իր զբաղեցրած բոլոր պաշտոններում Վլ. Մովսիսյանի անդադրում գործունեության անսպառ ավյունը մղել է հարազատ ժողովրդի և հայրենիքի ճակատագրով մշտարթուն մտահոգությամբ: Վստահաբար կարելի է փաստել, որ այս բոլոր պատասխանատու պաշտոններում, նրա գործունեության համար անսպառ աղբյուր են եղել տնտեսության կայուն զարգացումը, պետականության ամրապնդումը, բնակչության կենսամակարդակի անշեղ բարձրացումն ու հայրենիքի բարեշինությունը:

Ոչինչ այնքան համապարփակ կերպով չի արժեվորում անհատին, որքան նրա աշխատանքը: Վլադիմիր Մովսիսյանի վաստակն, իրավամբ, անկշռելի է, իսկ ժողովրդի հանընդհանուր սերն ու հարգանքը՝ օրինաչափ և մնայուն: Վլադիմիր Մովսիսյանն իր մասնակցությունն է ունեցել հանրապետական նշանակության նախագծային (ջրամբարներ, ՀԷԿ-եր), գիտահետազոտական և այլ մշակումներին: Նա մի քանի տասնյակ հոդվածների, զեկույցների և գրքերի հեղինակ էր: Հայրենիքին նվիրվածության վկայություններից են բազմաթիվ շքանշանները, մեդալներն ու պատվոգրերը: Արժանացել է ԽՍՀՄ «Աշխատանքային Կարմիր Դրոշի» երկու և «Պատվո նշան» շքանշանների: Նորանկախ Հայաստանում պարգևատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշաններով:

Անհերքելի է, որ Վլադիմիր Մովսիսյանի աշխատանքն ու ներդրումը երկրի համար կարևորագույն, ճակատագրական բարդ հիմնախնդիրների լուծման գործում ունեցել են վճռորոշ դերակատարություն: Կյանքի բոլոր ոլորտներում նա խորագիտակ էր, երկայնամիտ և իմաստուն:

Վլադիմիր Մովսիսյանն այն առանձնահատուկ պետական և հասարակական գործիչներից էր, ում անվիճելի հեղինակությունն արդյունք էր երկարամյա աշխատանքի, վաստակի ու Հայաստանի զարգացման, պետականության ամրապնդման ու կայացման գործում ունեցած նշանակալի ներդրման:

Վլադիմիր Մովսիսյանի՝ մեծահամբավ մարդու, հայրենիքի արժանավոր զավակի հիշատակը ընդմիշտ կմնա ժողովրդի սրտում:

Խորին խոնարհում Մեծ Մարդու հիշատակի առջև...

Սերգո Կարապետյան
ՀՀ գյուղատնտեսության նախարար

1 ՔՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Նախարարը հավելել է, որ Հայաստանը 2014 թվականին դարձել է Խաղողի և գինու միջազգային կազմակերպության (OIV) անդամ, ինչը հրաշալի հնարավորություն է ընձեռում՝ երկրում բնագավառը զարգացնելու և հայկական գինիների որակը բարելավելու համար: Սյուզ Լա Ռուսի գինու համալսարանի տնօրենն, իր հերթին, կարևորել է համագործակցությունը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ, մասնավորապես՝ երկու ուսումնական հաստատությունների միջև համատեղ ծրագրերի մշակումն ու իրականացումը, արտադրության մեջ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, վերապատրաստումը, տարբեր միջոցառումների կազմակերպումն ու գինետուրիզմի զարգացումը: Հանդիպման վերջում՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ՀՀ արդյունաբերական զարգացման հիմնադրամի և Ֆրանսիայի Սյուզ Լա Ռուս Գինու համալսարանի միջև կնքվել է քառակողմ համաձայնության հուշագիր:

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ

ՄՍԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կայացել է Հայաստանի մսամթերք արտադրողների միության հիմնադիր ժողովը, որը վարում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: Ժողովին մասնակցում էին ոլորտում գործող առաջատար ընկերությունների ներկայացուցիչները: «Գյուղատնտեսությունը մեր երկրի տնտեսության գերակա ճյուղերից մեկն է, և նրա զարգացման համար անչափ կարևոր է կոոպերատիվների և միությունների ստեղծումը: Քանի որ վերամշակող ճյուղը գյուղատնտեսական ոլորտի հիմնական ուղղություններից մեկն է, հետևաբար անհրաժեշտություն կա միավորել այդ ճյուղի ընկերությունները մեկ միության ներքո, որը ոչ միայն կզբաղվի մսամթերք արտադրողների խնդիրների լուծմամբ, այլ նաև կհամագործակցի անասնապահության ոլորտում գործող արտադրողների հետ», - նշել է նախարարը, և հավելել, որ միության ստեղծումը բխում է նաև պետության շահերից՝ նկատի ունենալով առաջիկայում Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությանը միանալու հանգամանքը:

Միաժամանակ նախարար Սերգո Կարապետյանը շեշտել է նաև, որ մսամթերք արտադրողների միության ապագա նախագահը ոչ միայն պետք է լինի ոլորտի գիտակ, այլև ակտիվորեն մասնակցի ոլորտին առնչվող բոլոր միջոցառումներին ու քննարկումներին: Ժողովի ընթացքում մասնակիցները ստորագրեցին Հայաստանի մսամթերք արտադրողների միության հիմնադիր պայմանագիրն ու հաստատեցին միության կանոնադրությունը: Միաձայն կողմ քվեարկությամբ միության նախագահ ընտրվեց «Ա. Բիլյան» ՍՊԸ տնօրեն Արամայիս Բիլյանը:

Շնորհավորելով միության նախագահին՝ նախարար Սերգո Կարապետյանը մաղթեց նրան բարեհաջող ու արդյունավետ աշխատանք՝ հավաստիացնելով, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը բազմակողմանիորեն կաջակցի նորաստեղծ միությանը:

Լիանա Շախնազարյան

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Օրերս ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Գառնիկ Պետրոսյանը խորհրդակցություն էր հրավիրել՝ քննարկելու Ղազախստանի Հանրապետությունում կայանալիք Ազգային Խորհրդի միջազգային կոնֆերանսի զեկույցը: Խորհրդակցությանը մասնակցում էին գիտական կենտրոնները, Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, ԳՆ հետ համագործակցող ՀԿ-ները:

Պարոն Պետրոսյանը, ողջունելով ներկաներին, նշեց, որ մեր հանրապետությունում գյուղատնտեսության ոլորտում խորհրդատվության համակարգը բավականին բարձր մակարդակի վրա է, իսկ հարևան երկրների փորձը նոր հնարավորություններ կստեղծի այդ ոլորտում: Ղազախստանի Հանրապետությունում Հայաստանը ներկայացնելու են Շիրակի և Սյունիքի ԳԱՄԿ-երի տնօրեններ՝ Ջ. Ասլանյանն ու Ա. Բակունցը: Ջ. Ասլանյանը ներկայացրեց զեկույց, որը կազմել էին խորհրդակցության մասնակիցները:

Զեկույցում մանրամասն ներկայացված էր ԳԱՀԿ-ի, ԳԱՄԿ-երի, գիտական կենտրոնների առաջնահերթ ուղղությունները, խորհրդատվական համակարգի գործունեությունը, համագործակցության ոլորտը, գիտական և կրթական կենտրոնների կանոնակարգը, կոոպերատիվների դերն ու նշանակությունը, ինչպես նաև ոչ պետական հաստատությունների իրականացրած գործունեությունը (Քարդ, Շեն, Էկոգլոբ, Կանաչ արահետ, FAO, Vista):

Զեկույցում նշված էին նաև կառավարության որոշումներն ու խորհրդատվական համակարգի զարգացման ուղիները, «Ագրոգիտություն» գիտական ամսագրի և «Ագրոլրատու» թերթի, խորհրդատվական-տեղեկատվական թերթիկների կարևորության վերաբերյալ եզրահանգումները:

Խորհրդակցության ընթացքում մասնակիցները հանդես եկան նաև առաջարկություններով, որոնք վերաբերում էին խորհրդատվության համակարգի բարելավմանը, տեսաշարերի և լուսանկարների ներկայացմանն ու հետադարձ կապի ապահովմանը:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՎԱՀԱՆ ԳՅՈՒՂԸ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Սկսած 2013թ., Գեղարքունիքի մարզի սահմանամերձ Վահան գյուղի բնակիչներն ազատվել են հողի հարկից: Գյուղապետ Գուրգեն Բալյանի տեղեկացմամբ, 2015 թվականից նախատեսվում է նրանց ազատել նաև բիզնես հարկերից: Նրա կարծիքով, կառավարության կողմից իրականացվող կարևորագույն քայլերը կնպաստեն սահմանամերձ գյուղերում տնտեսական ակտիվության խթանմանն ու գործարար միջավայրի բարելավմանը:

Գյուղատնտեսական տարին բարենպաստ էր գյուղացու համար. ցանվել է ավելի քան 70 հա աշնանացան ցորեն, 50 հա կարտոֆիլ: Ի դեպ, վերջին 2 տարում կրկին սկսել են կարտոֆիլ ցանել, մինչ այդ, իրացման դժվարությունների հետևանքով, դադարեցրել էին վերջինիս մշակությունը: «Պարզապես, գյուղացու ապրուստի հիմնական միջոցը կարտոֆիլաբուծությունն է: Եթե հնարավոր լինի իրացնել կարտոֆիլը, կցանենք ոչ թե 50, այլ 200 հա: Գյուղացին ջանասիրաբար արտադրում է կարտոֆիլ, սակայն իրացնելու տեղ չունի: Կառաջարկեի տարածաշրջանում ստեղծել մթերման կետ, որպեսզի կարողանային իրացնել դժվարությամբ աճեցված բերքը և եկամուտ ստանալ: Գյուղում առկա են տնտեսություններ, որոնք կարող են զբաղվել սերմնաբուծությամբ: Իսկ որակյալ սերմնացուի առկայության դեպքում, գյուղացին կավելացնի կարտոֆիլի ցանքատարածքները»,-ասում է գյուղապետը: Ինչ վերաբերում է հացահատիկային մշակաբույսերի մշակությանն, ապա անցյալ տարի հեկտարից ստացվել էր 40 ց բերք, որի զգալի մասը գյուղացին վերածել էր ալյուրի՝ ընտանիքի պահանջարկը բավարարելու համար: Հողօգտագործողները գոհ են նաև այս տարվա արդյունքներից: Ընթացիկ տարում 30 հեկտարի վրա կատարվել է աշնանացան, 50 հեկտարից ավելի հողատարածքի վրա կատարվել է ցրտահերկ, որպեսզի գարնանը կիրառեն գարու և առվույտի ցանք: Այդպիսով, կերարտադրության խնդիրները գյուղացին փորձում է լուծել սեփական ցանքերի հաշվին, ինչը կնպաստի կաթնամթերքի ինքնարժեքի իջեցմանը: Գյուղում նկատելի է անասնագլխաքանակի աճ, առկա է 1140 գլուխ խոշոր և 1100 մանր եղջերավոր անասուն: Նախորդ տարիների համեմատությամբ, անասնագլխաքանակն ավելացել է շուրջ 10%-ով:

«Անասնապահության բնագավառում գյուղի ամենամեծ հիմնախնդիրն իրացումն է, արտադրված կաթը հանձնում են «Աշտարակ կաթին», սակայն, վճարումները ձգձգվում են: Գյուղացիները վարկեր են վերցրել բանկերից, որոնք տրամադրել են բարձր մթերատու կենդանիների ձեռքբերմանը, քայլեր են ձեռնարկել տնտեսությունների զարգացման ուղղությամբ, քանի որ այլ աշխատատեղեր չկան: Մի խոսքով, արել են հնարավորը, որպեսզի գոնե անասնապահությունից ստացված եկամուտների հաշվին կարողանան հոգալ իրենց հոգսերը: Սակայն, կաթ արտադրողներն այսօր կանգնել են փաստի առջև»,- նշում է պրն. Բալյանը: Նրա տեղեկացմամբ, միջազգային կազմակերպությունները վերջին տարիներին արժեքավոր ծրագրեր են իրականացրել գյուղում: «Շեն» բարեգործական կազմակերպության նախաձեռնությամբ և CHF ընդհանուր բարեգործական հիմնադրամի միջոցներով, վերանորոգվել է գյուղի մանկապարտեզի շենքը: «Մեծ նշանակություն ունի մանկապարտեզի առկայությունը մեր գյուղի համար, քանի որ երբ երեխան մանկապարտեզում է, գյուղացին կարողանում է կատարել գյուղատնտեսական աշխատանքները: Այսօր արդեն 3-6 տարեկան 42 երեխա է հաճախում մանկապարտեզ, 5000 դրամ

վճարում է ծնողը, մնացած ծախսերը հոգում է գյուղապետարանը»,-ասում է Բալյանը: Համագործակցությունը միջազգային հասարակական և բարեգործական կազմակերպությունների հետ շարունակվում է: Գյուղն ընդգրկվել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի «Արոտավայրերի բարելավման բաղադրիչում»: Ծրագրի շրջանակներում նորոգվելու են դաշտամիջյան ճանապարհները, ջրարբիացվելու են արոտավայրերը, գյուղին հատկացվելու են «Բելառուս» մակնիշի ունիվերսալ տրակտորներ: «Եթե մենք տեղում ունենանք կաթի վերամշակման արտադրամաս, կարծում եմ, անասնագլխաքանակը կավելանա ևս 20 %-ով: Արոտավայրերի բուսական ծածկույթը հարուստ է բազմազան խոտաբույսերով: Մեր տարածքը համարվում է ալպյան գոտի: Կաթի մեջ բարձր է յուղի տոկոսայնությունը, կաթնամթերքն աչքի է ընկնում համային լավագույն հատկանիշներով»,- հավելում է գյուղապետը: Ի դեպ, տարածաշրջանում արտադրվող մեղրը ևս աչքի է ընկնում համային և որակական հատկանիշներով, ստացվում է էկոլոգիապես մաքուր սննդամթերք:

Վահան գյուղում առկա է 60 մեղվաընտանիք, որոնց թիվը գնալով ավելանում է: Գյուղապետի կարծիքով, այն պայմանավորված է իրացման խնդրի կարգավորումով, բարձրորակ բազմածաղկային մեղրը վաճառում է թե՛ ներքին շուկայում, և, թե՛ արտահանվում է (հիմնականում՝ Գերմանիա):

Գյուղն ունի բարեկարգ փողոցներ, որոնք նորոգվել են ՀՀ կառավարության միջոցների հաշվին: Սահմանային գյուղը ստանում է կառավարության գործնական աջակցությունը տարբեր բնագավառներում. լուծվել է փողոցային լուսավորության հարցը, կառուցվել՝ 2 խաղահրապարակ: Կառավարությունը 14 % տոկոսադրույքով հատկացնում է գյուղատնտեսական վարկեր, որից՝ 6 %-ը սուբսիդավորվում է: Պետական աջակցության ծրագրի հաշվին, գյուղացուն մատչելի գներով տրամադրվում են դիզվառելիք և պարարտանյութ: Գյուղաբնակ ուսանողների ուսման վարձը զիջվել է 20 %-ով, իսկ բնակիչների զգալի մասի բուժսպասարկումն իրականացվում է զեղչերով: VivaCell MTS-ի միջոցներով նորոգվել է գյուղի դպրոցի սանհանգույցը: Մտահոգության տեղիք է տալիս այն, որ օրվա գյուղատնտեսական աշխատանքների ավարտից հետո, երիտասարդությունն անելիք չունի, քանի որ գյուղը չունի ակումբ, սպորտդահլիճ, իսկ մշակույթի տան շենքը պատերազմի հետևանքով դարձել է վթարային:

Վահանում առկա է շուրջ 60 հա անտառային տարածք, որը պատկանում է «Հայանտառին»: «Կուզենայինք գյուղը շրջափակող լանջերը անտառապատվեին, այդպիսով կստեղծվեր անտառային պաշտպանիչ շերտ, տարածքը կվերածվեր հանգստի և զբոսանքի գոտու»,- առաջարկում է գյուղապետը: Խնդիրներ ունեն նաև խմելու ջրի հետ. 1,6 կմ երկարությամբ ջրագիծ է նորոգվել, բայց ավելի քան 40 տարվա վաղեմություն ունեցող ջրատարի ջրամբարից դեպի գյուղ տանող հատվածը դեռևս վատթար վիճակում է: Ջրի կորուստները մեծ են, գյուղացուն քիչ քանակությամբ ջուր է հասնում, և դա այն դեպքում, երբ ջրի պաշարներ շատ կան:

Վահանն ունի 1200 բնակիչ, մշտական բացակայողներ չկան, արտագնա աշխատանքի մեկնողները հետ են վերադառնում: 1992թ.-ից ի վեր, գյուղից ոչ ոք չի՛ հեռացել ու չի՛ հեռանալու, սահմանն են պահելու...

Նելլի Սահակյան

ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Կենսաանվտանգությունը համալիր միջոցառումների ամբողջություն է և շատ կարևոր է՝ հատկապես Հայաստանի նման աշխարհագրական դիրք ունեցող երկրի համար: Արտերկրում վաղուց արդեն ձևավորվել են կենսաանվտանգությամբ զբաղվող պետական և մասնավոր ինստիտուտներ»,- ասում է «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Թաթուլ Ստեփանյանը:

Կենսաանվտանգության ապահովման համալիր միջոցառումները կարող ենք բաժանել երկու մեծ խմբերի՝

Անհատական կենսաանվտանգություն. Խոսքն այն մասին է, թե յուրաքանչյուր մարդ ինչ է անում իր կենսաանվտանգությունն ապահովելու համար:

Խմբային կենսաանվտանգություն. Երբ դրանով զբաղվում է խումբը, յուրաքանչյուր անդամին լիազորելով որոշակի գործառույթներով:

«Կենսաանվտանգության ապահովման համալիրում մեծ դերակատարություն ունի անասնաբուժությունը: Անասնաբուժությամբ զբաղվող յուրաքանչյուր անձ, անկախ իր կարգավիճակից, ամենօրյա առնչություն է ունենում կենսաանվտանգության ապահովման հիմնադրույթների հետ: Կենսաբանական նորմերը խախտելու ժամանակ նյութական և բարոյական կորուստ ենք ունենում: Տնտեսական հետևանքների տեսանկյունից, որոշ հիվանդությունների դեմ արդյունավետ պայքարն առնչվում է միայն կենսաանվտանգության նորմերի պահպանման հետ և արդի գիտությունը, այդ հիվանդությունների դեմ պայքարի առավել արդյունավետ գործիքներ չի ստեղծել՝ ինչպես, օրինակ՝ խոզերի աֆրիկյան ժանտախտի պարագայում»,- նշում է Թաթուլ Ստեփանյանը:

«Գոյություն ունեն մարդկանց և կենդանիների համար ընդհանուր, ինչպես նաև՝ գյուղատնտեսական կենդանիների մոտ արագորեն տարածվելու և մեծ վնասներ հասցնող հիվանդություններ, որոնց դեմ պայքարի գործում մեծ դերակատարություն ունի կենսաանվտանգության նորմերի պահպանումը: Այն կարող է նշված հիվանդությունների տարածումը կանխող շատ կարևոր գործիք լինել, եթե կիրառվի ժամանակին և պատշաճ որակով:

Խնդրի բարոյական կողմը կայանում է նրանում, որ անասնաբուժական հանրությունը կորցնում է իր նկատմամբ ձևավորված վստահությունը, երբ օբյեկտիվ և սուբյեկտիվ իրողությունների պատճառով, չի կարողանում, հնարավորինս կարճ ժամկետներում, արդյունավետ կազմակերպել արձանագրված հիվանդության դեմ պայքարը»-հավելում է նա:

Մասնագետի կարծիքով՝ խնդիրը պետք է լինի ոչ թե այս կամ այն հիվանդության բուժումը կամ պայքարը դրա տարածման դեմ (սա նշանակում է, որ կենսաանվտանգության ոլորտում լուրջ հաջողություններ արձանագրած առաջավոր երկրների համեմատ՝ հետընթաց ենք ապրում, գնում ենք իրադարձությունների թիկունքից), այլ պետք է լինենք «գրոհողի» դիրքում՝ հնարավոր ռիսկերը ժամանակին բացահայտելու և կանխելու իմացությամբ:«Այսինքն, պետք է զարգացնել անասնաբուժական հանրության մտավոր և ստեղծագործական միտքը, քանի որ առանց դրա առաջընթաց ապահովելն անհնար է»,- նշում է Թաթուլ Ստեփանյանը:

Անասնապահական տնտեսությունները, եթե առաջնորդվեն կենսաանվտանգության նորմերով, ունենան համապատասխան մասնագետ, ապա կարող են իրենց տնտեսությունները զերծ պահել գրեթե բոլոր հիվանդություններից: Կենսաանվտանգության կիրառումն առավել շահավետ է տնտեսվարողի համար, քանի որ յուրաքանչյուր տարի գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների բուժման և կանխարգելման համար ծախսվող միջոցներն ավելի շատ են, քան կպահանջվի կենսաանվտանգության նորմերի պահպանման դեպքում:

Նելլի Սահակյան

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԳՈՐԾԵԼ

Երևանի Կասյան փողոցի վերին հատվածում 2014 թվականի հունիսի 8-ից մինչև նոյեմբերի 5-ը կազմակերպվել է թվով 40 տոնավաճառ, որոնցում գրանցվել են շուրջ 5520 գյուղացիական տնտեսություններ: Միջին հաշվով, մեկ տոնավաճառի ընթացքում իրացվել է 45-50 տոննա գյուղմթերք: Մաշտոցի պողոտային հարող տարածքում («Մալիբու» սրճարանի հարևանությամբ) այս տարվա հուլիսի 26-ից մինչև նոյեմբերի 5-ը կազմակերպվել է թվով 27 տոնավաճառ, որոնց գրանցվել են շուրջ 3537 գյուղացիական տնտեսություններ: Միջին հաշվով, մեկ տոնավաճառի ընթացքում իրացվել է 35-40 տոննա գյուղմթերք:

Տոնավաճառները կազմակերպվում են յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին, մասնակցում են հանրապետության տարբեր մարզերի շուրջ 100 գյուղացիական տնտեսություններ, որոնք սպառողներին ներկայացնում են բացառապես սեփական արտադրանքը: Տոնավաճառի մասնակիցներին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն անվճար հիմունքներով տրամադրել է հարմարավետ վրաններ, վաճառասեղաններ, կշեռքներ ու սայլակներ: Երևանի քաղաքապետարանն, իր հերթին, աջակցել է տարածքի տրամադրման հարցում և, յուրաքանչյուր տոնավաճառի օրվա ավարտին, իրականացրել տարածքի մաքրման աշխատանքներ: Գյուղացիական տնտեսությունների մասնակցելու պայմանները տոնավաճառներին, որոնք անց են կացվում 2011 թվականից, անփոփոխ են: Մասնակցությունը տոնավաճառին թույլատրվում է միայն գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) կողմից տրված համապատասխան տեղեկանքների առկայության դեպքում, որոնք հավաստում են, որ վաճառքի ներկայացվող ապրանքը հանդիսանում է տվյալ մասնակցի սեփական արտադրանքը: Տոնավաճառին, առևտրային միջնորդների մասնակցությունը բացառելու նպատակով, կազմակերպիչների կողմից տեղում իրականացվում է վերահսկողություն:

ՀՈՒԿԱ

ԱՎԵԼԱՑԵԼ Է ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ

Հանրապետությունում, 2014 թվականի նոյեմբերի սկզբին, օրական արտադրվող հավկիթի ծավալը կազմում է շուրջ 900 հազար, մինչդեռ օրական սպառումը կազմում է 730 հազար: Ավելցուկը հնարավորություն է ընձեռում պահեստավորել համապատասխան քանակությամբ պարենային ձու, որն ամանորյա տոներին ամբողջությամբ կբավարարի ազգաբնակչության պահանջարկը:

Ընթացիկ տարվա սեպտեմբերից սկսվեց շուրջ 400 հազար վառեկների ձվարկման փուլը, որի սկզբնական փուլում ձուն շատ մանր է, ինչի հետևանքով օրական արտադրվող և իրացվող ձվի մեկ երրորդը կազմում էր փոքր տրամագծով և ցածր գներով ձուն: Հոկտեմբեր ամսից սկսած իրացվող հավկիթի խմբաքանակում արդեն մեծ տրամագծով և բարձր գին ունեցող արտադրանքի տեսակարար կշիռը սկսեց ավելանալ: Այս հանգամանքով պայմանավորված, հանրապետությունում փոփոխվել են հավկիթի միջին գները: Ինչ վերաբերում է խոշոր, դիետիկ հավկիթի գներին, ապա դրանք մնացել են անփոփոխ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ՄԱՆՐԱՁԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՄԲԱՔԱՆԱԿԸ

Սևանա լճի տեղածին ձկնատեսակների պահպանության և վերարտադրության ապահովման նպատակով, ՀՀ պետական բյուջեից տրամադրված միջոցների հաշվին, Գեղարքունիքի մարզի Արծվանիստ գյուղի վարչական տարածքում լիճ բաց թողնվեց 5 գրամանոց 200 հազար «Ամառային իշխան» և 167 հազար«Գեղարքունի» տեսակի մանրաձուկ:

Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը, Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ և Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, ինչպես նաև՝ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Մանրաձուկը ձեռք է բերվել «Արևաձուկ» ՍՊԸ և «Անգեղակոթի ձկնաբուծական կոմբինատ» ԲԲԸ ձկնաբույծներից՝ պետգնումների գործող ընթացակարգի համաձայն:

Ըստ ՀՀ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանի՝ Սևանա լճի տեղածին ձկնատեսակների պաշարների համալրման ծրագրերը պետության կողմից կշարունակվեն նաև առաջիկա տարիներին: Սակայն մոտ ապագայում շեշտը դրվելու է տեղում ձկնաբուծարան կառուցելու և մանրաձուկ ստանալու քաղաքականության վրա, այն հաշվով, որ ոչ թե մանրաձուկը տեղափոխվի հեռավոր մարզերից, այլ արտադրվի տեղում և գետից միանգամից բաց թողնվի լիճ: Անդրադառնալով ապօրինի ձկնորսության դեմ պայքարի կազմակերպման հետ կապված խնդիրներին՝ նախարարը նշեց, որ հարկավոր է միահամուռ ուժերով պայքարել ապօրինի ձկնորսության դեմ՝ մանավանդ սիգի ձվադրության շրջանում, որը սկսվում է նոյեմբերի երրորդ տասնօրյակից:

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, անդրադառնալով Սևանի տեղածին ձկնատեսակների վերարտադրության, պահպանման ու զարգացման հետ կապված խնդիրներին, նշեց, որ Գեղարքունիքի մարզում ժամանակակից ձկնաբուծարանի կառուցումը կատարվելու է պետական ծրագրով և լուծելու է ինչպես մայրական կազմի ստեղծման, այնպես էլ մանրաձկան արտադրության հետ կապված խնդիրները: «Մինչև այս տարվա վերջ, լուծված կլինեն հողհատկացման հետ կապված խնդիրները, իսկ շինարարական աշխատանքները կընթանան 2015 թվականից: Ցանցավանդակներում կաճեցվեն միայն նորակառույց ու ժամանակակից ձկնաբուծարանում ստացված տեղածին ձկնատեսակներ: Իսկ նրանք, ովքեր երկար տարիներ զբաղվել են ձկնորսությամբ, իրենց փորձով պիտանի կլինեն ձկան վերարտադրության կազմակերպման և այլ խնդիրներում»,- նշեց Գեղարքունիքի մարզպետը:

Մանրաձկան բացթողնման տարածքում, համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի հրամանի, «Սևան Ազգային պարկ» ՊՈԱԿ աշխատակիցների կողմից սահմանված է շուրջօրյա հսկողություն:

Ագրոլրատու
Նոյեմբեր 5 - 17, 2014 թ.
թիվ 29 (2051)

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿ «ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ»

Հայկական քաղցրահամ խաղողից արտադրված կոնյակը մշտապես պահանջված է եղել աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Համային և որակական հատկանիշներով Հայաստանում արտադրված կոնյակը չի զիջել, նույնիսկ, ֆրանսիական կոնյակների տեսականիներին: Այսօր էլ, շնորհիվ հայ կոնյակագործների աշխատանքային փորձի ու հմտությունների, մեր երկրում արտադրվում է հայկական կոնյակի բարձրորակ ընտրանի:

Հայաստանում այդպիսի առաքելություն է իրականացնում նաև «Գինու-կոնյակի տուն «Շահնազարյան» ընկերությունը, որը հիմնադրվել է 2010 թ.՝ Սամվել Շահնազարյանի և նրա որդիների՝ Հայկ և Արմեն Շահնազարյանների ջանքերով: Շուրջ 24 տարի նրանք բնակվել են Ուկրաինայում, այնուհետև վերադարձել են հայրենի երկիր՝ Հայաստան: Երևանից դեպի Եղվարդ ձգվող խճուղու ձախ կողմում՝ ամայի հատվածում կառուցել են գործարանը:

«Գինու-կոնյակի տուն «Շահնազարյան» գործարանի արտադրամասերում շրջելով, զրուցելով ընկերության գլխավոր տնօրենի հետ, ծանոթացանք ձեռնարկությունում կատարվող աշխատանքներին, իրականացվող ներդրումներին, առաջիկա ծրագրերին:

- Պարոն Շահնազարյան, կոնյակի արտադրության համար օգտագործվող հումքը որտեղի՞ց եք ձեռք բերում և ի՞նչ տեսականիներ է արտադրվում այսօր:

- Նախկինում, տղաներիս հետ միասին, զբաղվում էինք սպիրտի արտահանմամբ, հետագայում որոշեցինք հիմնել մեր արտադրությունը: Որակյալ սպիրտը հիմնականում ձեռք ենք բերել Երևանի կոնյակի, Արտաշատի գինու-կոնյակի գործարաններից, իսկ խաղողը՝ Արմավիրի մարզից: Արտադրության առաջին տարում վաճառել ենք 200 հազար շիշ կոնյակ, երկրորդ տարում՝ 500 հազար, երրորդ տարում՝ 800 հազար, այս տարի՝ ավելի քան 1 մլն., հույս ունենք, որ տարվա վերջում 2 մլն. շիշ կոնյակի վաճառք կունենանք:

Մենք արտադրում ենք՝ «Հայաստանի մարգարիտ», «Հայկական հրաշք», «Հայկական խճանկար», թոռնիկներիս անունով՝«Գայասոն բրիլիանտ» հավաքածու՝ 3, 5, 7, 10, 12, 15, 20 տարեկան կոնյակներ: Սկսել ենք արտադրել խաղողի «Բարի լույս» անվանումով օղին, որն արդեն հայկական շուկայում վաճառվում է: Մեր կարգախոսն է՝ «Կառուցենք լավ գործարան, տանք լավ արտադրանք»:

- Կոնյակի, օղու արտադրատեսակները ո՞ր երկրներ են արտահանվում:

- Մինչ այժմ արտադրանքի հիմնական մասն արտահանվել է Ռուսաստանի Դաշնություն, ինչպես նաև Ուկրաինա, որոշակի քանակություն՝ նաև Եվրոպա, իսկ տեղական շուկա միայն այս տարի ենք մտել: Իմ տղան, վաճառքի գծով տնօրեն Արմեն Շահնազարյանը ներկա պահին գտնվում է Լեհաստանում: Բանակցությունների արդյունքում փոխշահավետ պայմանագրեր կկնքվեն նաև Ռումինիայի և Չեխիայի հետ:

- Արտադրության ծավալները մեծացնելու նպատակով, ի՞նչ ներդրումներ եք պատրաստվում կատարել:

- Ունենք ծրագիր՝ նախալեռնային գոտիներում, մեր ուժերի հնարավորության չափով, զարգացնել գյուղատնտեսությունը, որոշ չափով ֆինանսավորել: Ցանկանում ենք վերականգնել այն խաղողի այգիները, որոնք վերացվել են դեռևս 25 տարի առաջ: Կարծում եմ, այդ գործընթացը շահավետ կլինի նաև գյուղացիական տնտեսությունների համար: Գինիների որոշ տեսակներ արտադրելու նպատակով կառուցելու ենք 8-10 հազար տոննա մթերման հզորությամբ խաղողի ընդունման և վերամշակման համար անհրաժեշտ թորման արտադրամասեր:

Մեզ մոտ ստեղծված են լաբորատոր պայմաններ, գործարանում ունենք արտասահմանյան արտադրության հոսքագիծ, սարքեր, սարքավորումներ: Այս ամենը մի քանի օրից կհամալրվի Բուլղարիայից ստացված նոր սարքավորումներով: Ունենք բանիմաց գինեգործ՝ Վարդան Վարդանյանն է, ով նվիրված է իր աշխատանքին և բարձրակարգ մասնագետ է:

- ՀՀ կառավարության կողմից ի՞նչ հնարավորություններ են այսօր տրվում արտադրողներին:

- Հայաստանի Հանրապետության նախագահը մեծ ուշադրություն է դարձնում արտադրության գործընթացին, այցելել է մեր գործարան, շրջել և ծանոթացել արտադրության խնդիրներին, հաջողություններին: Մեզ մոտ է այցելել ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը: Նա մեծ ջանքեր է ներդնում, որպեսզի մեր հանրապետությունում արտադրությունները զարգանան: ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, կառավարության հետ միասին, անում է ամեն ինչ՝ ընկերության զարգացմանը նպաստելու համար: Որակյալ արտադրանքը ստացվում է նաև մեզ մոտ ձևավորված ընտանեկան հարաբերությունների մթնոլորտում՝ մեծագույն հարգանքի են արժանանում մեր աշխատակիցները, այնպես որ «Գինու-կոնյակի տուն» անվանումն ամբողջովին համապատասխանում է բովանդակությանը:

«Մենք ունենք շատ գեղեցիկ երկիր, գեղեցիկ ավանդույթներ, անցել ենք բազումդժվարությունների միջով: Պետք է միասնական ուժերով հաղթահարել դժվարությունները, որ ոչ մի հայ չգնա երկրից»,- նշում է Ս. Շահնազարյանը:

Մեր ընթերցողներին տեղեկացնենք, որ Սամվել Շահնազարյանը, լինելով բարեպաշտ հայազգի զավակ, իր աջակցությունն է բերում Հայ Առաքելական Եկեղեցուն: Շահնազարյանների ընտանիքը զանգեր է նվիրաբերել Երևանի սբ. Հովհաննես, Նոր Նորքի սբ. Սարգիս եկեղեցիներին, սրբապատկերներ՝ ՀՀ առաքելական տարբեր վանական համալիրների և սկսել է աջակցել Հովտաշենում կառուցվող նոր եկեղեցու աշխատանքներին: Այս ամենի հետ մեկտեղ, ցանկանում է իր նպաստը բերել Հայ Առաքելական Եկեղեցու Երուսաղեմի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերականգնմանը:

Մանվել Կիրակոսյան

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՄԵՂՈՒՆԵՐԻ ՁՄԵՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Սկիզբը՝ նախորդ համարում

Թրթնջկաթթու: **20 գրամ թթուն լուծում են մեկ լիտր գոլ ջրում և գոլ վիճակում օգտագործում բիպինի օգտագործման ձևով: Օդի ջերմաստիճանը պետք է լինի 16°C-ից ոչ պակաս:**

Բուժման ավարտից հետո անհրաժեշտ է ստուգել վարակվածության աստիճանը: Եթե այն 5 %-ից ավելի է, բուժումը կրկնում են: Վարոատոզի վարակվածության աստիճանը որոշելու համար գոյություն ունեն մի շարք մեթոդներ և սարքեր: Առաջարկվում է սարք, որի միջոցով մեղվաընտանիքի բնի կենտրոնական մեղրահացերից /նախօրոք գտնելով և առանձնացնելով մայր մեղվին/ վերցնում են 100-200 մեղու և տեղափոխում տաք ջրով /70-80°C/ կիսով չափ լցված 0.5-1 լ ապակյա տարայի մեջ ու թափահարում: Տզերի առկայության դեպքում, դրանք անջատվում են մեղուներից և իջնում տարայի հատակը: Այնուհետև հաշվում են տզերի, իսկ սարքում՝ մեղուների քանակը և դուրս բերում վարակվածության աստիճանը: Մինչև 10 %-ը համարվում է թույլ, 10-20 %-ը՝ միջին, 20-30 % և ավելին՝ ուժեղ:

Ամերիկացի գիտնականներն առաջարկում են տաք ջուրը փոխարինել շաքարափոշով՝ հետևյալ ձևով. վերցնում են 0.5 լ-անոց ապակե տարա, լցնում 100 գ շաքարափոշի և 100-200 մեղու մեկ ընտանիքից, փակում ցանցե կափարիչով և թափահարում /ցանցի անցքերի չափերը չպետք է գերազանցեն 2.5 մմ-ը/: Թափահարումից տզերը պոկվում են մեղուների մարմնից: Շրջելով ապակե տարան՝ շաքարափոշու հետ սպիտակ թղթի վրա թափվում են նաև տզերը: Իմանալով մեղուների և թափված տզերի քանակը, կարելի է որոշել ընտանիքի վարակվածության աստիճանը:

Օրինակ՝ շաքարափոշու մեջ կա 21 տիզ, իսկ մեղվի քանակը 136 հատ է: Կազմեք համեմատությունը՝

136-100 %, 21 - X %

X= 21x100/136 =15.4 %:

Այսինքն՝ վարակվածության աստիճանը 15.4 % է: Միատեսակ դեղամիջոցի բազմիցս օգտագործումը հանգեցնում է նրան, որ տիզը ձեռք է բերում իմունիտետ: Դրա համար խորհուրդ է տրվում պարբերաբար փոփոխել օգտագործվող դեղամիջոցները: Հայտնի է, որ օգոստոսից մինչև մարտ ամիսները մեղվաընտանիքներն օգտագործում են բնում եղած մեղրի պաշարները: Հաշվարկված է, որ ձմեռվա պաշարը մեր պայմաներում, միջին ուժի ընտանիքում, պետք է լինի 12 կգ-ից ոչ պակաս:

Եթե մեղվապահը, փեթակները զննելիս, նկատում է, որ կերապաշարը պակաս է, ուրեմն այն պետք է լրացվի շաքարաջրով: Վերջինը պատրաստվում է 1,5:1 հարաբերությամբ, այսինքն՝ 1,5 կգ շաքարավազը լուծում են 1լ եռացրած ջրում՝ 1 լ լուծույթին ավելացնում են 0,5գ լիմոնի աղ կամ 0,3 մլ քացախաթթու: Մեղվի բնականոն ընտանիքը ձմեռվա նախօրյակին իր կծիկը կազմում է արկանոցի մոտ: Ձմռան ընթացքում կծիկը, օգտագործելով մեղրը, բարձրանում է վերև, հետո գնում հետ և կողքի: Եթե կծիկը, շարժվելով դեպի կողք, ճանապարհին հանդիպում է դատարկ մեղրահացի, չի կարողանում այն շրջանցել և հասնել մեղրով մեղրահացին, հետևաբար՝ մեղվաընտանիքը սատկում է:

Լինում են դեպքեր, երբ մեղվապահը դատարկ և կիսադատարկ մեղրահացերը թողնում է փեթակում՝ բնի կողքը: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ցերեկները օդի ջերմությունը հասնում է 15-20°C, իսկ գիշերները՝ իջնում մինչև -5-10°C: Մեղուները հեշտությամբ տաքացնում են դատարկ մեղրահացերը: Որոշ մեղվաընտանիքներ, երբ երեկոյան ջերմությունը իջնում է, կծիկ են կազմում դատարկ մեղրահացերի վրա, հուսով, որ հաջորդ օրը նորից կլինի տաք եղանակ և կկարողանան թռչել: Ցրտերի գալը հանգեցնում է նրան, որ այդ մեղուները մնում են դատարկ մեղրահացերի վրա և սատկում: Դրա համար մեղվապահը պարտավոր է ժամանակին հանել դատարկ

↳6

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Շուրջ 6 տարվա պատմություն ունի Ֆրանսիայի Ռոն Ալպ շրջանի և Հայաստանի Համայնքների Ասոցացիայի համագործակցությունը, որը նպատակաուղղված է ՀՀ համայնքների զարգացմանը: Այն ներառում է՝ աշխատատեղերի ստեղծում, գյուղատնտեսական մթերքների արտադրության աճ, սոցիալական ծրագրերի արմատավորում, ինչպես նաև՝ զբոսաշրջության, բնապահպանական, մշակութային արժեքների խթանում և այլն: Ռոն Ալպ շրջանը որոշակի ծրագրեր է իրականացնում նաև Լոռու մարզի Ստեփանավանի և Թումանյանի տարածաշրջաններում: G2iA (Հայկական միջմասնագիտական միջազգային խմբավորում) կազմակերպության ներկայացրած ծրագրով՝ Ռոն Ալպը 2011 թվականից ֆինանսավորել է Օձունում թեյաբույսերի կոոպերատիվի ստեղծումը, չորանոցի կառուցումը և փաթեթավորման սարքավորումների ձեռքբերումը: Բավականաչափ ծավալ ապահովելու դեպքում, նախատեսվում է նաև թեյաբույսերի արտահանում Ֆրանսիա և Բելառուսի Հանրապետություն:

2010 թվականին Ռոն Ալպը Դսեղում ֆինանսավորել է ֆրանսիական Biotop և Հայաստանի Թռչնասերների ու թռչնապահպանների միության համատեղ ծրագիրը: Այն համաֆինանսավորվել է ՄԱԿ-ի գլոբալ էկոլոգիական ֆոնդի և Bird Life international կազմակերպության կողմից և նպատակաուղղվել է տարածաշրջանում էկոտուրիզմի զարգացմանն ու էկոհամակարգի, մասնավորապես՝ վայրի թռչունների պահպանմանը, Դսեղից և հարևան համայնքներից կամավորների տնտեսական եկամուտների ապահովմանը:

Եվս երկու ծրագիր իրագործվում է Ստեփանավանում: Ռոն Ալպյան քայլարշավորդների կոմիտեն, Ստեփանավանի և շրջակա համայնքների տուրիստական ներուժի ուսումնասիրության արդյունքում, 2012 թվականին ներկայացրեց քայլարշավային էկոտուրիզմի զարգացմանն ուղղված մի ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է վերապատրաստման ազգային մակարդակ ապահովող կենտրոնի ստեղծում և զբոսավարների և տեղական դերակատարների վերապատրաստում: Ծրագիրը, որն իրականացվում է Ստեփանավանի ինֆոկենտրոնի և ճգնաժամային իրավիճակների վերահսկման կենտրոնի հետ համատեղ, ներառում է նաև Լոռու մարզի ինֆոգրաֆիական և տոպոգրաֆիական քարտեզի ստեղծում:

Ստեփանավանում մեկնարկած մյուս ծրագիրը ներառում է սոցիալական և առողջական օգնության կենտրոնի ստեղծում, որն ուղղված է տարեցների տնային խնամքին և օգնությանը:

Վերոնշյալ բոլոր ծրագրերում ներգրավված են տեղական ինքնակառավարման մարմինները: Լոռու մարզպետարանը, ի դեմս մարզպետի ու Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի աշխատակազմի, հանդիսանում է այս ծրագրերի տարածքային կրողն ու գործընկերը:

Կատարված աշխատանքների գնահատմանը, նոր համատեղ ծրագրերի նախանշմանն էր վերաբերում վերջերս Ռոն Ալպի ռեգիոնալ խորհրդական, Հայաստան-Ֆրանսիա հանձնախմբի նախագահ Էդուարդ Սիմոնյանի և նրա ֆրանսիացի ուղեկիցների հանդիպումը Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի հետ: Հանդիպմանը մասնակցում էին Ռոն Ալպի հայաստանյան ներկայացուցիչ Աննա Ֆիորինին, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան մշակույթի և գիտության հարցերով կցորդ Ալիս Լենան, Ֆրանսիայի ֆինանսների նախարարության ներկայացուցիչ Իվ Դիլլոնը, քայլարշավորդների դեպարտամենտի ներկայացուցիչ Բեռնար Հուառոն, G2IA ներկայացուցիչ Սասուն Ռոժին, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դավիթ Մանուչարյանը, Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հասմիկ Մկրտչյանը, մարզպետի խորհրդական Լևոն Ասլանյանը:

Շնորհակալություն հայտնելով մարզպետին՝ ջերմ ընդունելության համար՝ Էդուարդ Սիմոնյանը հույս հայտնեց, որ իրենց կողմից իրականացվող ծրագրերն առավել արդյունավետ շարունակություն կգտնեն, նոր, շահավետ հեռանկարներ կունենան: Մարզպետ Ա. Նալբանդյանն, իր հերթին, երախտագիտություն հայտնեց ֆրանսիացի գործընկերներին՝ Լոռու մարզի բնակչության համար անչափ կարևոր ծրագրերի իրականացման համար, նշեց, որ մարզի և Ֆրանսիայի Ալպ Կոտ Դ՛ Ազյուր տարածաշրջանի հետ 16-ամյա փոխհամագործակցության շրջանակներում արդեն իսկ մեծ ծավալի աշխատանքներ են սկիզբ առել գյուղատնտեսության, տուրիզմի, ֆրանկոֆոնիայի ոլորտներում և կարծիք հայտնեց, որ թե՛ կազմակերպչական, և թե՛ ֆինանսական տեսանկյունից, միանգամայն շահավետ կլինի բոլոր ծրագրերի համակենտրոնացումը: Մարզպետի համոզմամբ՝ հայ-ֆրանսիական համագործակցությունը տարեցտարի նոր բովանդակություն է ստանում, որն իր բարերար ազդեցությունն է թողնում տարածաշրջանի զարգացման գործում:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԿԲԱՐԵԼԱՎՎԻ ՈՐԱԿԸ

Իջևանի քաղաքապետարանի քաղաքացիների սպասարկման կենտրոնում, «Համայնքների զարգացում հարավային կովկասում» ծրագրի շրջանակներում, գիտելիքի կառավարման հերթական դասընթացն էր: Այն վերաբերում էր համայնքային կառավարման տեղեկատվական համակարգին:

Մասնակցում էին ծրագրի 70 շահառու համայնքների ներկայացուցիչները: Մասնակիցներին ողջունեցին Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Միշա Մխիթարյանը և Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Բորիս Թանանյանը: Նրանք կարևորեցին համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի դերը համայնքներում, ինչը նպաստում է տեղական ինքնակառավարման մարմինների, աշխատակազմի կողմից իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը, տեղեկատվության թափանցիկությանը: Այնուհետև «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի հնարավորությունները համայնքային բյուջեի կառավարման գործում, առկա խնդիրները և դրանց լուծումները» թեմայով դասընթաց վարեց «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի նախագահ Գրիշա Խաչատրյանը: Նա, ցուցադրվող նյութերի միջոցով, համոզիչ փաստարկներ ներկայացրեց, նաև նշեց, որ համակարգը զարգացնելուն զուգընթաց, արդեն այն համալրվել է նոր բաղադրիչներով և հնարավորություններով: Հորդորեց՝ այդ հնարավորություններն օգտագործել լիարժեք: «Նախաձեռնության շահառու 20 համայնքի առաջընթացը ՀԿ ՏՀ-ի կիրառման գործում» թեման ներկայացրեց ծրագրի խորհրդատու Անուշ Դուրգարյանը: Այնուհետև մարզի Գոշ, Կիրանց, Բերքաբեր, Ոսկեվան և այլ շահառու համայնքների ներկայացուցիչները խոսեցին իրենց կայքերում նկատված թերությունների և առավելությունների մասին: Գրիշա Խաչատրյանը համոզմունք հայտնեց, որ այդ մտահոգությունները, որոնք հատկապես վերաբերում էին այլ տեղեկատվական համակարգերի հետ համակցման մոդուլներին, կկարգավորվեն և ծառայությունների որակն էլ ավելի կբարելավվի:

Տ. Նազինյան

5 ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՄԵՂՈՒՆԵՐԻ ՁՄԵՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

մեղրահացերը և փոխարենը տեղավորել միջնատախտակ և կողքի տաքացնող բարձիկ:

Մեղուների հիմնական և տարածված հիվանդություններից մեկը նոզեմատոզն է, որն արտահայտվում է ձմռան երկրորդ կեսին և գարնանը: Հիվանդանում են մեղուները, բոռերը և մայրերը: Դա միաբջիջ օրգանիզմ է, որը մակաբուծում է միջին աղիքում: Ձմռան ընթացքում հիվանդությանը բնորոշ հատկանիշներն են՝ մեղուների անհանգստությունը, լույծը, որոշ մեղուների կամ ընտանիքների անկումը: Հիվանդ մեղուները պոկվում են կծիկից, սողում բնում, ցրտահարվում, ընկնում փեթակի հատակին և սատկում: Հիվանդ մեղուները ձգտում են դուրս գալ փեթակից և իրենց կղանքով, որը պարունակում է մեծ քանակությամբ հիվանդության հարուցիչներ, կեղտոտում են փեթակի պատերը, մեղրահացերը:

Խորհուրդ է տրվում աշնանը, որպես կանխարգելիչ միջոց, օգտագործել նոզեմատ կամ նոզեմացիտ դեղերը: Երկուսն էլ օգտագործվում են նույն ձևով՝ 5գ դեղամիջոցը լուծում են 0,5 լ գոլ ջրում և լուծույթը խառնում 20 լ շաքարաջրի հետ: Ստացված օշարակը տալիս են մեղուներին, այն հաշվարկով, որ մեկ շրջանակ մեղուն ստանա 100 մլ օշարակ: Այս դեղամիջոցը տալիս են կերակրման վերջում: Լավ արդյունք են տալիս բնի կենտրոնում տեղակայված շրջանակների վրայի կերակրամանները:

Գարնանն այդ դեղամիջոցները օգտագործվում են երկու անգամ՝ 5-6 օր ընդմիջումով: Ձմռանը նշված դեղամիջոցները կարելի է օգտագործել կանդիի մեջ: Վերցվում է 4 մաս շաքարի փոշի և 1 մաս տաք մեղր, այսինքն՝ 8 կգ շաքարափոշուն ավելացնում են 2 կգ մեղր և 5 գ դեղամիջոց՝ լուծված 0.3 լ գոլ ջրում: Այդ բոլորը շաղախում են այնքան, մինչև ստացվի համասեռ զանգված: Մինչև մեղվի թռիչքի սկսվելը, հունվար ամսից՝ 0.5 կգ շաքարաբլիթը դրվում է մեղվի կծիկի վերևում՝ շրջանակների վրա: Մեղուն մեծ հաճույքով օգտագործում է այդ խառնուրդը և ստանում պահանջվող դեղամիջոցը: Ժամանակին և ճիշտ դեղամիջոցներով կերակրումները երաշխիք են մեղվի ընտանիքների հաջող ձմեռման համար: Ներկայումս որոշ մեղվապահներ ձմռանը մեղվի ընտանիքները թողնում են դրսում, իսկ մյուսները տանում ձմեռանոց:

Ձմեռանոցում ջերմաստիճանի տատանումները քիչ են: Մեղուները հավասար են օգտագործում իրենց պաշարները: Բնի խոնավությունը բարձր է: Մեղվապահը չի կարող ստուգել և պարզել մեղվի ընտանիքի վիճակը: Ձմեռանոցում կրծողներն անհանգստացնում են մեղուներին, իսկ ջերմաստիճանի հանկարծակի բարձրացման դեպքում՝ մեղուն անհանգստանում է և ձգտում դուրս գալ փեթակից: Դրսում ձմեռելը հնարավորություն է տալիս մեղվապահին պարբերաբար ստուգելու ընտանիքների վիճակը: Եվ եթե պետք է, ապա կերակրել քաղցածներին, իջեցնել փեթակի խոնավության աստիճանը՝ ծալելով շրջանակների վրայի շորի անկյունը: Եղանակների բարենպաստ պայմաններում մեղուն ունի հնարավորություն՝ կատարելու մաքրման թռիչք և ազատվելու կղանքից: Դրսում եղած ընտանիքներում սատկած մեղուների քանակը քիչ է:

Հարկ է նշել, որ քիմիական դեղամիջոցները պետք է զգուշությամբ օգտագործվեն, քանի որ դրանք բացասաբար են անդրադառնում մեղվաբույծների առողջության վրա: Հիվանդությունների դեմ դեղամիջոցներ կիրառելիս, խորհուրդ է տրվում տարիներ շարունակ չօգտագործել միևնույն դեղամիջոցները: Խորհուրդ է տրվում օգտվել միայն գործարանային պայմաններում պատրաստված մոմաթերթից: Պատրաստուկները ձեռք բերելիս, պարտադիր պետք է պահանջել օգտագործման հրահանգները, իսկ միջոցառումներն անցկացնելիս, խստորեն հետևել ու պահպանել դրանցում նշված բոլոր պահանջները: Անկախ նրանից, հիվանդություններ կան, թե ոչ, մեղվանոցում պահպանել պահանջվող սանիտարահիգիենիկ կանոնները:

Նորակ Հակոբյան
Կենսաբանական գիտությունների թեկնածու
Կարեն Ավետիսյան
Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

«Մուլտի Ագրո» գիտաարտադրական կենտրոն

Ագրոլրատու
Նոյեմբեր 5 - 17, 2014 թ.
թիվ 29 (2051)

ՕՐԳԱՆԻԿ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՄԹԵՐՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Օրերս «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության աջակցությամբ, Գյուղի կանանց միջազգային օրվա շրջանակներում, կազմակերպել էր գյուղմթերքների ցուցահանդես-վաճառք: Միջոցառումն անցկացվեց «Մալիբու» սրճարանին հարակից տարածքում գործող գյուղատնտեսական տոնավաճառի հարևանությամբ:

Ցուցահանդես-վաճառքին մասնակցում էին՝ Կոտայքի մարզի Սոլակ, Արարատի մարզի Դիտակ, Արագածոտնի մարզի Սաղմոսավան և Տավուշի մարզի Ոսկեվան գյուղերը: Մասնակից համայնքները մասնակցել էին ուսուցողական սեմինարների, դասընթացների և գյուղերի կանանց ուսուցանել զերծ մնալ ժամկետանց և արգելված թունաքիմիկատներից, ցանքատարածություններում կիրառել կենսահումուս և զբաղվել միմիայն օրգանական հողագործությամբ: Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳՆ փոխնախարար Ռոբերտ Մակարյանը: Նա նշեց, որ նման ցուցահանդես-վաճառքն օգնելու է կանանց լուծել սոցիալական խնդիրներ՝ միաժամանակ գնորդներին մատուցելով էկոլոգիապես մաքուր մթերքներ: Մասնակիցների հետ զրուցեց նաև գյուղատնտեսության նախարարության Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության երկրագործության և սերմնաբուծության զարգացման բաժնի պետ Կարինե Եսայանը: Ըստ տիկին Եսայանի, ողջունելի է, որ համայնքներում կանայք ևս շահագրգռված են օրգանիկ գյուղատնտեսության զարգացմամբ:

Ագրոէկոլոգ, միջոցառման կազմակերպիչ Լուսինե Նալբանդյանը նշեց, որ միջոցառման նպատակն է՝ զբաղվել կայուն գյուղատնտեսությամբ, այսինքն՝ մշակել առանց թունաքիմիկատների կիրառմամբ աճեցված գյուղմթերքներ, որոնք էկոլոգիապես մաքուր են և չունեն վնասակար ազդեցություն: Կազմակերպիչը հատուկ շնորհակալություն հայտնեց գյուղատնտեսության նախարարությանը՝ տաղավարներ տրամադրելու համար:

Բարձր բերք ստանալու համար, հայ երկրագործը հաճախակի օգտագործում է զանազան ագրոքիմիկատներ, որոնք, թեև կարճաժամկետ, դրական ազդեցություն են թողնում բույսերի վրա, սակայն համարվում են շրջակա միջավայրի և սննդի աղտոտիչներ: Թունաքիմիկատները ոչ միայն վտանգավոր են մարդու առողջության և շրջակա միջավայրի համար, այլև շատ հաճախ կարող են չծառայել իրենց նպատակին:

Չնայած ցուրտ եղանակին՝ կանանց եռուզեռն ու ակտիվությունը չէր դադարում: Մասնակից գյուղերի կանայք իրենց ձեռքերով աճեցրած և պատրաստած մթերքներն էին ներկայացնում սպառողներին: Անհնար էր ուշադրություն չդարձնել բազմազան չրերին, մրգերին, բանջարեղեններին, կաթնամթերքին, մեղրին և գինուն: Գնորդները մեծ հետաքրքրությամբ էին մոտենում այն տաղավարներին, որտեղ կար լոբի, ձավարեղեն, արիշտա, ընկույզ, չիր և չամիչ:

Անցորդներն էլ չէին կարող կանգ չառնել և չհետաքրքրվել ներկայացված տեսականիներով: Իսկ գնումներ կատարելով՝ միաժամանակ օգնում են բարելավել գյուղաբնակ կանանց ֆինանսական վիճակը:

Վերջին տարիներին, անհանգստությունը սպառողների առողջության և շրջակա միջավայրի պահպանության համար նպաստավոր հող ստեղծեց կայուն գյուղատնտեսության զարգացման համար նաև մեր երկրում: Միջազգային հանրությունը, դառնալով ավելի իրազեկ վերոհիշյալ խնդիրների մասին, ավելի ու ավելի է խրախուսում օրգանական գյուղատնտեսության և կայուն գյուղատնտեսության այլ ձևերի զարգացումը:

Լիանա Ծախնազարյան

ԴԻՄԱՆԿԱՐ

ՆՎԻՐՈՒՄ ԳՈՐԾԻՆ

Բոլոր հայ կանանց պես, տիկին Աղունիկը երազում է բոլորին երջանիկ տեսնել, վայելել երեխաների երջանկությունը, իսկ կյանքն այնքան բարելավվի, որ ոչ ոք չբռնի արտագաղթի ճանապարհը: Ցանկանում է ունենալ ինքնաբավ և ապահովված համայնք: Նա լավատես է ու վստահ, որ երբ կա նվիրում ու անձնվեր աշխատանք, ապա բոլոր նախագծերը երիտասարդ գյուղում մոտ ապագայում կյանքի կկոչվեն:

Տիկին Աղունիկը 2005 թ.-ին ընտրվել է Արեգնադեմ համայնքի ղեկավար: Պարգևատրվել է բազմաթիվ պատվոգրերով և շնորհակալագրերով, արժանացել գյուղմթերքների արտադրության ոլորտում կին հերոսի պատվավոր կոչման: Վերջերս Արեգնադեմում հիմնադրվել է նաև արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվ, որի գործունեության շրջանակներում, այս տարեվերջին և հաջորդ տարվա ընթացքում, կիրականացվեն արոտների ջրարբիացման աշխատանքներ:

Աղունիկ Հազրյանը մասնագիտությամբ տնտեսագետ է: Ավարտել է Տերնոպոլի տնտեսագիտական համալսարանի Երևանի մասնաճյուղը, մինչ այդ սովորել և ավարտել է Մոսկվայի արվեստի համալսարանի թատերական բաժինը: Նա բոլոր կանանց պես, վաղ է արթնանում: Առավոտյան փորձում է տնային գործերն ավարտել ու արագ հասնել գյուղապետարան. աշխատանքն է սպասում: «Բոլոր համայնքներում էլ խնդիրներ լինում են, մի գյուղում՝ շատ, մեկ ուրիշում՝ քիչ: Կարևորը լուծումներ գտնելն է, գյուղի և գյուղացու կողքին կանգնելը»,- ասում է տիկին Աղունիկը: Համայնքի ղեկավարը միաժամանակ համակարգում է «Արեգնադեմ» գյուղական կոոպերատիվի աշխատանքները: Կոոպերատիվը վերջերս է սկսել իր գործունեությունը: Պատրաստում են փոխինձ, թթու լավաշ, մշակում են բլղուր, կաթի վերամշակմամբ են զբաղվում և ստանում մածուն, կարագ, թթվասեր և պանիր, թխում հայկական ավանդական լավաշ, գաթա, պատրաստում վայրի մամուխի մուրաբա, մասուրի ջեմ: Արեգնադեմի գյուղական կանանց խորհրդի անդամների համար անցկացվել է ուսուցողական դասընթաց՝ «Համայնքի զարգացում. նոր մոտեցումներ ու սկզբունքներ և դրանց գործնական կիրառության հնարավորությունները» թեմայով: Վերջերս մայրաքաղաքում կազմակերպված Գյուղական կյանքի և ավանդույթների փառատոնին ներկայացրել էին իրենց ողջ տեսականին, որը բարձր գնահատականի արժանացավ: Ըստ տիկին Աղունիկի, հաջորդ տարում կավելացնեն տեսականին: Սիրով ու առանձնակի ջերմությամբ է կատարում գյուղատնտեսական աշխատանքները, ինչպես ինքն է ասում՝ պետք է հողին սիրես, որ նա կերակրի քեզ:

Արեգնադեմի գյուղական կանանց խորհրդի անդամները միաժամանակ զբաղվում են նաև հետաքրքիր ձեռագործ աշխատանքներով: Համագործակցում են Վրաստանի կանանց խորհուրդների և կոոպերատիվների հետ, իսկ մոտ ժամանակներս մասնակցելու են հարևան երկրում կազմակերպվող փառատոնին: Նախատեսում են ընդլայնել կոոպերատիվի աշխատանքները, կաթի մթերման կետից բացի, ունենալ պանրի արտադրամաս:

Լիանա Ծախնազարյան

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԵՆ

Հիլֆսվերք ավստրիական կազմակերպության՝ Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի ղեկավար Ջուլիա Վեբերը և Հարավային Կովկասի տարածաշրջանի ղեկավար Նիկոլ Բաուերը, «Կանաչ արահետ» ՀԿ-ի նախագահ Նունե Սարուխանյանը և ծրագրի համակարգող Վարդգես Դավթյանը վերջերս այցելեցին Շիրակի մարզի Արեգնադեմ համայնք՝ ծանոթանալու «Արեգնադեմ» գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվի շենքի վերանորոգման և սարքավորումներով վերազինման աշխատանքներին:

Կոոպերատիվի շենքը գրեթե պատրաստ է, ավարտին են հասցվել նաև ներքին հարդարման աշխատանքները: Կոոպերատիվին են տրամադրվել բոլոր անհրաժեշտ սարքավորումներն ու գույքը՝ գործունեությունն սկսելու համար:

Կոոպերատիվը հիմնադրվել է «Հարավային Կովկասում գյուղական համայնքների կանանց կարողությունների զարգացումը՝ կայուն գյուղատնտեսության ապահովման համար» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ, Հիլֆսվերք ավստրիական կազմակերպության կողմից՝ Վրաստանում համագործակցելով CENN-ի և Հայաստանում՝ «Կանաչ արահետ» գյուղատնտեսության աջակցության ՀԿ-ի հետ:

«Կանաչ արահետ» ՀԿ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է....

ՉՐԵՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Սկզբունքորեն բոլոր տեսակի մրգերից կարելի է պատրաստել չիր, սակայն արտադրված չրերն իրենց որակական և համային հատկանիշներով իրարից կտարբերվեն այնքանով, որքանով տարբերվում են թարմ մրգերը: Մրգերը, մինչև չորացման նախապատրաստելը, անհրաժեշտ է ապահովել սանիտարահիգիենիկ պայմաններ:

Որակյալ չիր պատրաստելու համար անհրաժեշտ են մաքուր, առողջ և տեխնիկական հասունության շրջանում գտնվող մրգեր: Բերքահավաքից հետո հումքի պահելու ժամկետը չպետք է գերազանցի ծիրանի և դեղձի համար՝ 12 ժամ, սալորի, թզի համար՝ 1 օր, տանձի և խնձորի վաղահաս սորտերի համար՝ 2, իսկ ուշահաս սորտերի համար՝ 7 օր, որից հետո կատարվում են հետևյալ գործողությունները՝ հումքի լվացում, տեսակավորում, կտրատում: Խորհուրդ է տրվում տանձի, դեղձի և խնձորի կտրատված պտուղները ընկղմել լիմոնաթթվի 0,5% -ոց լուծույթի մեջ, որը հնարավորություն կտա զերծ մնալ գունափոխությունից: Գրեթե բոլոր բաց գույնի մրգատեսակները (ծիրան, դեղձ, տանձ, թուզ, խնձոր) չորացման ընթացքում գունափոխվում և մգանում են՝ կորցնելով ապրանքային տեսքը, այդ կանխելու համար կատարվում է հումքի սուլֆիտացիա, որը կատարվում է երկու եղանակով՝ չոր և խոնավ:

Միրգ չորացնելը միրգը պահելու մի ձև է, որը հեշտ է, էժան ու օգտակար: Չորամրգի թուրմն ու հյութն օգտագործում են որպես բուժամիջոց՝ սրտի ու աղեստամոքսային տրակտի հիվանդությամբ տառապողների համար: Չորամրգերից ամենատարածվածն ու գործածվողն այսօր չամիչն է, սև սալորի ու ծիրանի չրերը: Չորամիրգը միայն հյութ պատրաստելու համար չի օգտագործվում: Չրերով կարելի է հիանալի պահքային կերակրատեսակներ պատրաստել: Դրանք պատկանում են քաղցր մթերքների թվին, բայց և միաժամանակ արյան մեջ չեն բարձրացնում շաքարի քանակությունը, այդ իսկ պատճառով էլ, օգտակար են օրգանիզմին:

Իրենց բաղադրության մեջ եղած կալցիումի շնորհիվ, չրերի օգտագործումը բարենպաստ ազդեցություն է ունենում դեմքի մաշկի վրա, ամրանում են եղունգներն ու մազերը: Չորամիրգ գնելիս, պետք է ուշադրություն դարձնել վերջինիս որակական հատկությունների վրա: Եթե չրերը շատ են չորացված, ուրեմն համապատասխան պայմաններում չեն պատրաստվել: Եթե մրգից գինու համ է գալիս, ուրեմն հումքը ճիշտ պայմաններում չի մշակվել: Օգտագործելուց առաջ ցանկալի է լվանալ հոսող ջրի տակ: Չրերը պարունակում են մարդու օրգանիզմին անհրաժեշտ բոլոր վիտամիններն ու միկրոտարրերը: Օրինակ՝ եթե օրվա մեջ օգտագործենք 5 հատ սև սալորաչիր, 5 հատ ծիրանաչիր և նույնքան էլ թզի չիր, կարելի է մեկընդմիշտ մոռանալ աղիների պրոբլեմի մասին: Արմավը՝ խուրման, որպես էներգիայի աղբյուր, կարելի է ասել՝ գերազանցում է բոլոր տեսակի չրերին: Բացի Ե և Հ վիտամիններից, պարունակում է ցանկացած վիտամին, իհարկե, ամենաշատը նրանում վիտամին B_5-ն է, որը բարձրացնում է աշխատունակությունն ու օգնում կենտրոնացնել ուշադրությունը: Բացի այդ, այս չրի մեջ կան նյութեր, որ նույնացնում են ասպիրինի հետ: Իզուր չէ, որ հնում արմավի պտուղներն օգտագործվել են մրսածության ու գլխացավի դեպքում: Տանձի չիրն օգնում է օրգանիզմին ազատվել ծանր մետաղներից ու թունավոր նյութերից: Չորացրած տանձն իր մեջ կարող է պարունակել 36 տոկոս շաքար և 24 տոկոս ջուր: Թուզը կարգավորում է վահանագեղձի գործունեությունն ու կանխում ուռուցքածին բջիջների առաջացումը: Ժողովրդական բժշկության մեջ այն օգտագործվում է որպես օրգանիզմը խարամներից մաքրող միջոց: Ծիրանաչիրն իսկական վիտամինների աղբյուր է, պարունակում է՝ երկաթ, կալցիում, կալցիում, ֆոսֆոր, կարոտին և այլն:

Սև սալորաչիրը հարուստ է այն խմբի նյութերով, որոնք կարգավորում են աճխաջրերի նյութափոխանակությունը, օժտված է նաև հանգստացնող հատկությամբ: Շատ օգտակար է աղեստամոքսային համակարգի հիվանդություններ ունեցողներին: Խնձորը պարունակում է բոլոր անհրաժեշտ վիտամինները: Խնձորի չիրը պարունակում է 40-45 տոկոս շաքար: Չամիչը շատ օգտակար է երեխաներին և նրանց, ովքեր թույլ նյարդային համակարգ ունեն, նաև նպաստում է իմունիտետի բարձրացմանը:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԴԵԼՖԻՆԻՈՒՄ

Առաջին հայացքից աչքի չընկնող այս բույսն ունի զարմանալի բուժիչ հատկություններ և քիմիական բաղադրություն:

Դելֆինիում արևելյանը կամ նույն ինքը՝ դաշտայինը, «քոչվոր» բույս է: Բույսը հայերենում անվանում են նաև ոջլախոտ և ամրուկ:

Հնագույն ժամանակներից նկատել են, որ բույսի թարմ խոտը կամ չորացրած խոտի խաշուկն օգտակար է կոտրվածքների ապաքինման և ոսկրերի ցավի դեպքում: Հայերեն «ոջլախոտ» և «ամրուկ» անվանումները կապված են դելֆինիում դաշտայինի հնագույն բժշկական կիրառման հետ: Բույսի գիտական անվանումը կապված է ծաղկի կառուցվածքի հետ: Հինգ ծաղկաթերթերից մեկն ավելի երկար է, և նոր բացվող կոկոնը նման է դելֆինի գլխի: Դելֆինիումը պատկանում է գորտնուկազգիների ընտանիքին և ընդգրկում է մոտ 350 տեսակ: Կան նաև բազմաթիվ մշակովի հիբրիդներ: ՀՀ բնության մեջ հանդիպում է 14 տեսակ: Դաշտայինը միամյա ձմեռող բույս է: Արմատն ուղղաձիգ խորացող է: Ցողունի վրա հերթադիր և անկանոն դասավորված մատնաձև գծային տերևների ծոցերից աճում են երկրորդային, ապա՝ երրորդային ճյուղերը: Ծաղկաբույլը երկար, հուրանաձև ողկույզ է:

Ծաղկակոթունները ջահանման են, ծաղիկները՝ վառ մանուշակագույն: Դելֆինիումները մեղրատու բույսեր են, սակայն բույսի որոշ տեսակների ծաղկափոշուց նկատվել են մեղուների թունավորման դեպքեր, իսկ մեղրն ունի հարբեցնող հատկություն: Նման մեղրով մեր նախնիները երբեմն կասեցրել են թշնամու առաջխաղացումը: Պատմիչ Քսենոֆոնը գրել է.«Հայաստանով անցնելիս, տեսանք բազմաթիվ փեթակներ: Այն զինվորները, ովքեր կերան այդ մեղրից, բոլորը խելակորույս եղան, իսկ շատ ուտողները ոտքի կանգնեցին 3-4 օրից»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ագրոլրատու» թերթ
1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 20 դրամ

«Ագրոլրատու»թերթի և
«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի

«Ագրոգիտություն» ամսագիր
1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունն իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները,
«Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ստրաշե» կազմակերպությունները:

ՍԿՍՎԵԼ Է 2015 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության
հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Ն. ՍԱՀԱԿՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 126
ստորագրված է տպագրության 17.11.2014 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա